Լուսակերտ

Վարչական ղեկավար՝ Սամվել Բալաբեկյան

Հեռ: 093 26 37 59

Մակերես՝ 0.6կմ²

Բնակչություն՝ 650

Ինդեքս՝ 3022

lusakerti@mail.ru

Լուսակերտ, գյուղ Հայաստանի Շիրակի մարզում, շրջկենտրոն Արթիկից 13,7 կմ հարավ։ Նախնիների մի մասը 1915-1920 թթ.-ին գաղթել է Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից և Կարսից։ Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, շաքարի ճակնդեղի, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ։ Լուսակերտն ունի XVII-XIX դարերի Սբ. Աստվածածին եկեղեցի։ Շրջակայքում կան մ.թ.ա. 2-րդ հազարամյակին վերաբերող դամբարաններ և հնություններ։

ՀՀ Շիրակի մարզի Լուսակերտ գյուղը հիմնադրվել է 14-րդ դարում մոտ 1370-1380ական թվականներին։Գյուղի հիմնադիրները եկել են Տարոնի և Ալաշկերտի գավառներից :

Գյուղի հիմնադիրները եղել են ՝ Համբարը,Ավագը և Պողոն։Գյուղը կառուցվել է Ղորանղու և Սառնաղբյուր գյուղի մոտից եկած գետակների միախառնման տեղում։Այն անվանվել է Կարկաչա գյուղ՝ ջրերի անընդմեջ կարկաչելու պատճառով։16-րդ դարում

գյուղում իշխել են օսմանյան թուրքեը:Գյուղում իշխել է Թալիբ փաշի որդին և գյուղը նրա անունով կոչվել է Թալիբօղլի:

1949 թվականին գյուղը վերանվանվել է Լուսակերտ:Գյուղում `սարի փոշին, 1885-1902 թթ.-ին կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը կանգուն է մինչև օրս:Գյուղի աշխարհագրական դիրքը լեռնային է,կլիմայական պայմանները կիսաբարենպաստ:Տարվա եղանակներից անհամեմատ լավ է ամառը և աշունը,ձմեռը երկարատև է և խստաշունչ, գարունը սովորաբար ուշացած է գալիս և ուղեկցվում է ցրտահարություններով:

Գյուղը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում,ծովի մակերևույթից 1540մ բարձրության վրա:Բնակչության հիմնական զբաղմունքը բուսաբուծությունն է ու անասնապահությունը:Երիտասարդության մեծ մասը մեկնում է արտագնա աշխատանքի,մեծ է գործազուրկների թիվը: